Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1515 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ՝ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԵՏ ՇՓՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում հայտնաբերված՝ մարդու առողջության համար վտանգավոր սննդամթերքի, վտանգավոր սննդային հավելումների և սննդամթերքի հետ շփվող վտանգավոր նյութերի (այսուհետ՝ վտանգավոր արտադրանք) մասին ծանուցման ընթացակարգը։

2. Սույն կարգը ենթակա է կիրառման սննդամթերքի, սննդային հավելումների, սննդամթերքի հետ շփվող նյութերի արտադրության և շրջանառության փուլերում վտան-գավոր արտադրանք տնօրինող իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ) և պետական կառավարման լիազոր մարմնի կողմից։

3. Տնտեսավարող սուբյեկտը Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում արտադրանքի վտանգավոր լինելու կամ վտանգավոր լինելու վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու դեպքում կամ դրա մասին տեղեկացվելուց հետո կապի ցանկացած միջոցով անհապաղ և սույն կարգով սահմանված ձևով՝ 24 ժամվա ընթացքում ծանուցում է տվյալ արտադրանքի մատակարարին, ձեռք բերողին և լիազոր մարմնին։

4. Տնտեսավարող սուբյեկտը հայտնաբերված վտանգավոր արտադրանքի հետագա իրացումը կանխելու նպատակով «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով ձեռնարկում է համապատասխան միջոցներ։

5. Լիազոր մարմինը ծանուցում ուղարկած տնտեսավարող սուբյեկտից կարող է պահանջել տվյալ արտադրանքին առնչվող այլ լրացուցիչ տեղեկատվություն։

6. Լիազոր մարմինը վտանգավոր արտադրանքի մասին տնտեսավարող սուբյեկտից ստացած տեղեկատվությունը՝ արտադրանքի լաբորատոր փորձարկման արդյունքում հաստատվելուց հետո 24 ժամվա ընթացքում տրամադրում է զանգվածային լրատվության միջոցներին և այլ շահագրգիռ մարմինների։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

_____
(լիազոր մարմնի, ծանուցվող տնտեսավարող սուբյեկտի անվանումը, գտնվելու վայրը)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

_____ _____ 200 թ.

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը, գտնվելու վայրը _____

_____

Վտանգավոր արտադրանքի անվանումը _____

_____

Արտադրանքի՝ վտանգավոր լինելու մասին տեղեկատվության աղբյուրը, հայտնաբերման և (կամ) ստացման ճշգրիտ ժամանակը _____

_____

Արտադրող (ներմուծող) կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը _____

_____

Վտանգավոր արտադրանքի փաթեթավորումը _____

Վտանգավոր արտադրանքի պահման պայմանները _____

_____

Վտանգավոր արտադրանքի քանակը _____

Վտանգավոր արտադրանքի խմբաքանակի նույնականացման նշանը, համարը _____

_____

Վտանգավոր արտադրանքի արտադրման ամսաթիվը և պիտանիության ժամկետը _____

_____

Վտանգավոր արտադրանքն իրացվել է՝ _____

_____
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, արտահանվող երկիրը)

_____

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (պաշտոնը)

_____
(անունը, ազգանունը)